ԱՐԱԴ/0448/01/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18 սեպտեմբերի 2026 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՐԱԴ/0448/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի օգոստոսի 28-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2026 թվականի հուլիսի 3-ին Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Դավիթ Բորիսի Բաբայանի և

Իշխան Վահրամի Մկրտչյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 84123526 (ԱՐԱԴ/0448/01/26) քրեական վարույթը:

1.1. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ժ.Նազարյան) 2026 թվականի հուլիսի 6-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԱԴ/0448/01/26 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հուլիսի 31-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԱՐԱԴ/0448/01/26 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

2. 2026 թվականի օգոստոսի 13-ին թիվ ԱՐԱԴ/0448/01/26 քրեական վարույթն ստացվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, իսկ 2026 թվականի օգոստոսի 14-ին՝ Աբովյանի նստավայրում:

2.1. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Գ.Շահբազյան) 2026 թվականի օգոստոսի 17-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԱԴ/0448/01/26 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2.2. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի օգոստոսի 28-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԱՐԱԴ/0448/01/26 քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի սեպտեմբերի 14-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Դավիթ Բաբայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի

համար, որ *«(…) նա մի խումբ անձանց հետ, նախնական համաձայնությամբ, փորձել է իրացման նպատակով ապօրինի ձեռք բերել առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց:*

Դավիթ Բորիսի Բաբայանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ (…), չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու, դրանք ձեռք բերելու, պահելու կամ իրացնելու թույլտվություն, խմբի կազմում, նախնական համաձայնության գալով Իշխան Վահրամի Մկրտչյանի հետ, իրացնելու նպատակով ապօրինի փորձել է ձեռք բերել Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը /../ սահմանելու մասին» 2018թ. հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման հավելված N 1-ի 78-րդ կետով նախատեսված՝ առանձնապես խոշոր չափերով՝ 7514 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

Այսպես.

ԻԻՀ քաղաքացի ումն Մեհրին, նպատակ ունենալով ՀՀ-ում ապօրինի իրացնել առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց, առաջարկել է ՀՀ քաղաքացուն Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով և Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ԻԻՀ-ից մաքսանենգությամբ՝ առանց մաքսային հսկողության, ՀՀ տեղափոխված առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցը վերցնել, տեղափոխել Երևան քաղաք և տեղադրել թաքստոցում, որի դիմաց խոստացել է վճարել 1000 ԱՄՆ դոլար գումար: Այդ մասին ՀՀ քաղաքացին հայտնել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ ԹԱՇԴՊՎ ծառայողներին և պատրաստակամություն հայտնել համագործակցելու:

ԻԻՀ քաղաքացի ումն Մեհրին Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով և Հայաստանի Հանրապետության պետական սահմանով, մաքսանենգությամբ՝ առանց մաքսային հսկողության, 2026 թվականի մայիսի 08-ին՝

ժամը 06:00-ին, համագործակցող անձի հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածության համաձայն, հայ-իրանական պետական սահմանի փշալարային ցանցի վրայով Արաքսաշեն-Շվանիձոր ավտոճանապարհի հարակից հատված է նետել առանձնապես խոշոր չափերով՝ 7514 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցով լցված 12 առանձին փաթեթների պարունակությամբ մեկ մեծ փաթեթ, որը ՀՀ քաղաքացին վերցրել և ներկայացրել է իրավապահ մարմնին:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ ԹԱՇԴՊ վարչության ՀՄԹԱՇԴՊԲ աշխատակիցները, նպատակ ունենալով բացահայտել մաքսանենգությամբ ՀՀ տեղափոխված թմրամիջոցի ապօրինի շրջանառության հետ առնչություն ունեցող անձանց շրջանակը, իրականացրել են «Վերահսկելի մատակարարում և գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառում, որի շրջանակներում հայտնաբերված թվով 12 փաթեթներում առկա «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի զանգվածը նույնությամբ փոխարինվել է նմանատիպ, սակայն ազատ շրջանառության մեջ գտնվող զանգվածով և փաթեթավորվել մեկ փաթեթով՝ բերվելով նախնական տեսքի, և հատուկ քիմիական փոշով մշակվելուց հետո, 2026 թվականի մայիսի 21-ին, ոմն Մեհրիի պահանջով տեղափոխվել, տեղադրվել է 40.246973, 44.587143 աշխարհագրական կոորդինատներով տեղանքում՝ Նոր Գեղի Փրունտիկ Թևոսյան փողոցին հարակից հատվածում, և հիշյալ կոորդինատներն ուղարկվել են վերջինիս:

*Այնուհետև Իշխան Վահրամի Մկրտչյանը և Դավիթ Բորիսի Բաբայանը, նախաքննությամբ չպարզված հանգամանքներում տեղեկանալով, որ առանձնապես խոշոր չափերով՝ 7514 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը գտնվում է 40.246973, 44.587/14, աշխարհագրական կոորդինատներով տեղանքում, իրենց հանցավոր մտադրությունը՝ խմբի կազմում նշված տեսակի ու չափի թմրամիջոցն իրացնելու նպատակով ապօրինի ձեռք բերելու դիտավորությամբ, 2026 թվականի մայիսի 21-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Իշխան Վահրամի Մկրտչյանի կողմից վարած ********** մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայով ժամանել են նշված վայր, սակայն նախնական համաձայնությամբ խմբի կազմում գործող Իշխան Մկրտչյանի և Դավիթ Բաբայանի՝ առանձնապես խոշոր չափերով՝ 7514 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցն իրացնելու նպատակով ապօրինի ձեռք բերելու և տեղափոխելու դիտավորությունն իրենց կամքից անկախ*

*հանգամանքներով չի իրագործվել, քանի որ մաքսանենգությամբ ապօրինի ՀՀ տեղափոխված նշված տեսակի ու չափի թմրամիջոցը փոխարինված է եղել նմանատիպ այլ զանգվածով, իսկ Դ.Բաբայանը, թաքստոցից վերցնելով փաթեթը նստել է մեքենան և վերջիններս նկատելով իրավապահ մարմնի աշխատակիցներին, Իշխան Վահրամի Մկրտչյանի կողմից շահագործվող ********** մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայով դիմել են փախուստի, որի ընթացքում Դ.Բաբայանը ավտոմեքենայից դուրս է նետել վերցված փաթեթը և վերջիններս չեն հնարավորվել ավտոմեքենան կանգնեցնելու վերաբերյալ պարեկային ծառայության աշխատակիցների օրինական պահանջներին: Այնուհետև ոստիկանության աշխատակիցներին հաջողվել է կանգնեցնել ավտոմեքենան, որից հետո ձերբակալել Իշխան Մկրտչյանին, իսկ Դավիթ Բաբայանը դիմել է փախուստի, որոշակի տարածություն վազել է, սակայն նախազգուշական կրակոց արձակելուց հետո կանգնել է և ձերբակալվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության աշխատակիցների կողմից, իսկ թմրամիջոցին փոխարինված զանգվածով փաթեթը հայտնաբերվել և վերցվել է 2026 թվականի մայիսի 22-ին՝ Արագածոտնի մարզի Աշտարակ-Նոր Երզնկա ավտոճանապարհի 2-րդ կիլոմետրում կատարված դեպքի վայրի զննությամբ»: (…)»*[1]:

4.1. 2026 թվականի հունիսի 29-ի որոշմամբ նույնաբովանդակ ենթադրյալ արարքի համար քրեական հետապնդում է հարուցվել նաև Իշխան Մկրտչյանի նկատմամբ[2]:

5. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածով նախատեսված հանցանքին՝ Դատարանը փաստում է, որ այն ձևական հանցակազմով է նկարագրված, ինչը նշանակում է, որ օրենսդիրը չի պահանջում որևէ կոնկրետ վնասակար հետևանքի առաջացում: Հանցագործությունն ավարտված է համարվում օրենքում թվարկված գործողություններից որևէ մեկի կատարման պահից (օրինակ՝ իրացնելու նպատակով թմրամիջոց ապօրինի արտադրելը, պատրաստելը, ձեռք*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 97-99:
[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 100-102:

բերելը, պահելը, առաքելը և այլն), անկախ հանցագործության առարկայի գտնվելու վայրից:

Թեև սույն դեպքում մեղադրանքը վերաբերում է ոչ թե ավարտված հանցագործությանը, այլ դրա փորձին, այնուամենայնիվ հանցափորձի դեպքում ևս տարածքային ընդդատությունը որոշելիս որոշիչ նշանակություն ունի այն գործողությունների կատարման վայրը, որոնք անմիջականորեն ուղղված են եղել հանցանք կատարելուն (ՀՀ քրեական օրենսգրքի 44-րդ հոդված): Հետևաբար՝ տվյալ դեպքում իրավական նշանակություն ունի այն վայրը, որտեղ կատարվել է իրացման նպատակով թմրամիջոցն ապօրինի ձեռք բերելու փորձին ուղղված գործողությունները:

(…)

Դատարանն արձանագրում է, որ ըստ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքի՝ ենթադրյալ հանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց իրացման նպատակով ձեռք բերելու փորձ կատարելով, որպիսի ենթադրյալ գործողությունները կատարվել են 40.246973, 44.587143 աշխարհագրական կոորդինատներով տեղանքում՝ Նոր Գեղի Փրունտիկ Թևոսյան փողոցին հարակից հատվածում, հետևաբար մեղադրյալների կողմից իրենց մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքների կատարման վայրը ՀՀ Կոտայքի մարզն է: Այլ կերպ ասած՝ Դատարանը գտնում է, որ երբ արարքը դրսևորվում է իրացման նպատակով թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու փորձ կատարելով, ապա հենց այն վայրն է հանդիսանում հանցավոր վարքագծի հիմնական դրսևորման տեղը, որտեղից կատարվել է ձեռքբերման փորձը՝ անկախ հանցագործության առարկայի գտնվելու վայրից:

Դատարանը հարկ է համարում նաև կրկին նշել, որ տարածքային ընդդատության հարցը որոշելիս էական է ենթադրյալ հանցանքի՝ գործողության կամ անգործության կատարման վայրի պարզումը, և ոչ թե ենթադրյալ հանցանքի առարկայի (իրեղեն ապացույցի) գտնվելու վայրի պարզումը: Ենթադրյալ հանցանքի առարկայի գտնվելու վայրով տարածքային ընդդատության հարցը որոշելը չի կարող լինել իրավաչափ և, ըստ էության, հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ, 18-րդ, 25-րդ և քրեադատավարական օրենսգրքի ընդդատության կանոնները սահմանող

նորմերին, քանի որ ընդդատության տարածքային հատկանիշը փոփոխության կենթարկվի ոչ կանխատեսելի և ոչ իրավական հատկանիշով (գործողության կամ անգործության կատարման վայրով) այլ զուտ ենթադրյալ հանցանքի առարկայի (իրեղեն ապացույցի) գտնվելու վայրով:

Վերոգրյալի հիման վրա Դատարանն արձանագրում է, որ թիվ ԱՐԱԴ/0448/01/26 քրեական գործով մեղադրյալներին մեղսագրվող ենթադրյալ արարքը՝ գործողությունը՝ իրացման նպատակով թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու փորձը կատարվել է ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս՝ ՀՀ Կոտայքի մարզում, հետևաբար սույն քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանին և այն՝ ըստ տարածքային ընդդատության պետք է փոխանցել ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (…)»[3]:

6. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսված, ի թիվս այլնի, նաև թմրամիջոց ապօրինի տեղափոխելու համար:*

Իշխան Մկրտչյանի և Դավիթ Բաբայանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումների համաձայն՝ վերջիններս ունեցել են թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու և տեղափոխելու մտադրություն (նպատակ): Այդ նպատակով, թաքստոցից թմրամիջոցը վերցնելուց հետո, նրանք նստել են ավտոմեքենան, որից հետո, նկատելով իրավապահ մարմինների աշխատակիցներին, դիմել են փախուստի: Փախուստի ընթացքում Դավիթ Բաբայանն ավտոմեքենայից դուրս է նետել վերցված փաթեթը, որը հայտնաբերվել է Արագածոտնի մարզի Աշտարակ-Նոր Երզնկա ավտոճանապարհի 2-րդ կիլոմետրի հատվածում կատարված դեպքի վայրի զննությամբ:

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 74-84:

Այլ խոսքով, նրանց ներկայացված մեղադրանքի համաձայն՝ նրանք սկսել են իրենց դիպավորության մեջ ընդգրկված նպատակին հասնելուն ուղղված գործողությունների կատարումը, սակայն նրանց դիպավորության մեջ ընդգրկված հանցագործությունը (այդ թվում՝ թմրամիջոցն ապօրինի տեղափոխելը) չի իրագործվել նրանց կամքից անկախ հանգամանքներով, այն է՝ իրական թմրամիջոցի զանգվածը փոփոխված լինելու և փաթեթն ավտոմեքենայից դուրս նետելու պատճառով:

Ըստ այդմ, Դատարանը գտնում է, որ սույն քրեական գործի փաստական հանգամանքների պարագայում (թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու, տեղափոխելու, պահելու դեպքում) միանշանակ չէ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (...) եզրահանգումը (...):

Հանցանքի կատարման վայրը որոշելու հարցի համատեքստում Դատարանը հարկ է համարում քննարկել նաև այն իրավիճակը, երբ թմրամիջոցի ապօրինի ձեռքբերումն արդեն ավարտված է, սակայն հանցավորն այն շարունակում է ապօրինի պահել ձեռքբերման վայրից դուրս (այլ վայրում): Այս դեպքում թմրամիջոցն ապօրինի պահելու հանցագործությունն ավարտված կհամարվի այն ժամանակ, երբ թմրամիջոցը դուրս կգա անձի ապօրինի տիրապետումից (իրացման, իրավապահ մարմինների կողմից հայտնաբերման ու առգրավման կամ այլ հանգամանքների ուժով) և այն վայրում, որտեղ դա տեղի կունենա:

Սույն գործով ներկայացված մեղադրանքի համաձայն՝ Իշխան Մկրտչյանը և Դավիթ Բաբայանը, նպատակ ավտոմեքենան, սկսել են թմրամիջոցն ապօրինի տեղափոխելու գործընթացը, որից հետո են նկատել ոստիկանության աշխատակիցներին, այդուհանդերձ անմիջապես չեն ձերբազատվել իրենց մոտ եղած փաթեթից, այլ շարունակել են իրենց դիտավորությամբ ընդգրկված՝ թմրանյութի տեղափոխման իրագործումը՝ անցնելով որոշակի տարածություն և այդ ընթացքում պահպանելով փաստացի տիրապետումը նշված զանգվածի նկատմամբ:

Դատարանն արձանագրում է, որ իրավապահ մարմինների կողմից հետապնդում սկսելու փաստն ինքնին չի կարող որակվել որպես հանցավոր արարքի փաստացի ու վերջնական խափանում կամ մեղադրյալների ապօրինի տիրապետումից թմրամիջոցի դուրսբերում:

Որպես նշված հետևությունը հիմնավորող օրինակ կարող է լինել, մասնավորապես այն իրավիճակը, երբ հանցավորը միջոցներ ձեռնարկեր թմրամիջոցն ամեն գնով իր մոտ պահելու ուղղությամբ, նրան հաջողվեր դիմել փախուստի՝ իր հետ տանելով թմրամիջոցը, որի պայմաններում ոստիկանության գործողությունները չէին հանգեցնի հանցանքի կատարման վերջնական կանխմանը կամ առարկայի առգրավմանը:

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ իրավապահ մարմինների կողմից հանցագործություն կատարած անձի բացահայտման կամ հետապնդման հանգամանքն էական նշանակություն չունի քննարկվող հանցագործության վերաբերյալ քրեական վարույթի տարածքային ընդդատության որոշման համար, քանի դեռ ապօրինի պահվող թմրամիջոցը փաստացի դուրս չի եկել անձի ապօրինի տիրապետումից:

Այսպիսով, Դատարանի վերոհիշյալ եզրահանգումները վեճ են առաջացնում սույն վարույթի տարածքային ընդդատության հարցի վերաբերյալ, որը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի՝ ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի կողմից: (…)»[4]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Նախևառաջ հարկ է արձանագրել, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 4-րդ մասի՝ վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը **նոօրյա ժամկետում** որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը: Մինչդեռ, սույն դեպքում Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2026 թվականի օգոստոսի 14-ին ստանալով թիվ ԱՐԱԴ/0448/01/26 վարույթը, 2026 թվականի օգոստոսի 17-ին որոշում է կայացրել վարույթն ստանձնելու և նախնական

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 26-32:

դատալսումներ նշանակելու մասին, իսկ 2026 թվականի օգոստոսի 28-ին, որոշում է կայացրել ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին:

Արձանագրելով հանդերձ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վերոնշյալ կանոնների խախտմամբ ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարան ուղարկելու հանգամանքը, այնուամենայնիվ, հիմք ընդունելով անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակությունը և դրա՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս հանդիսանալը, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթի ընդդատության հարցը ենթակա է լուծման:

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԱԴ/0448/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի*

նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[7]:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

(…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ ըստ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքի՝ ենթադրյալ հանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվել է իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ձեռք բերելու փորձ կատարելով, որպիսի ենթադրյալ գործողությունները կատարվել են ՀՀ Կոտայքի մարզի տարածքում, գտել է, որ սույն քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության պետք է փոխանցել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[8]:

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ մեղադրյալների նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումների համաձայն՝ վերջիններս ունեցել են թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու և տեղափոխելու մտադրություն (նպատակ), որը, սակայն, չի իրագործվել նրանց կամքից անկախ հանգամանքներով, այն է՝ իրական թմրամիջոցի զանգվածը փոփոխված լինելու և մեղադրյալ Դ.Բաբայանի կողմից փաթեթն ավտոմեքենայից դուրս նետելու պատճառով, գտել է, որ սույն վարույթի տարածքային ընդդատության հարցի առնչությամբ առկա է վեճ, որը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի կողմից[9]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ ըստ մեղադրյալներ Դ.Բաբայանին և Ի.Մկրտչյանին ներկայացված մեղադրանքի՝ նրանց դիտավորության մեջ ենթադրաբար ընդգրկված է եղել նաև թմրամիջոցի տեղափոխումը: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի փաստարկմանն առ այն, որ մեղադրյալներին վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքը կատարվել (ավարտվել) է ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում:

---

[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

14. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԱԴ/0448/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

15. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԱՐԱԴ/0448/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Դավիթ Բորիսի Բաբայանի և Իշխան Վահրամի Մկրտչյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ ԱՐԱԴ/0448/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ